ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՔԱՋԱՐԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

# Ծ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՋԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ԵՎ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ

ՔԱՋԱՐԱՆ - 2016

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի առաջնայնությունները սահմանել ենք.

*ղեկավարվելով* «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ՝ «Համայնքի ղեկավարի գործունեությունը բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում հոդվածով և «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով :

*առաջնորդվելով* Քաջարան քաղաքի կապիտալ զարգացման 2013-2016 թթ ծրագրի դրույթներով,

*համոզված լինելով*, որ համայնքի կայուն զարգացումը էապես կախված է էկոլոգիական խնդիրների լուծումից,

*գիտակցելով* էկոլոգիական կրթության և տեղեկատվության կարևորությունը էկոլոգիական մտածողության ձևավորման և համայնքի առջև ծառացած խնդիրների լուծմանը հասարակության ակտիվ մասնակցությունը ապահովելու գործում,

*կարևորելով* բնապահպանական ծրագրերի շարունակականությունը, ամբողջականությունն ու փոխկապակցվածությունը :

## ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենք,
2. ՀՀ Կառավարության «Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առաջարկվող բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնահերթությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները ՀՀ Բնապահպանության նախարարության ու ՀՀ Առողջապահության նախարարության հետ համաձայնեցնելու կարգը հաստատելու մասին» 29.09.2002թ թիվ 1544-Ն որոշում,
3. ՀՀ քաղաքաշինության նախարարի 03.04.2009թ. թիվ 35-Ն «ՀՀ տարածքում կառուցվող շենքերի, կառուցվածքների և շինարարական աշխատանքների տեսակների արժեքի խոշորացված ցուցանիշների ժողովածուն հաստատելու մասին» հրաման
4. ՀՀ Կառավարության «Բնապահպանական ծրագրերի մշակման (նախագծման) կարգը հաստատելու մասին» 27.02.2014թ. թիվ 197-Ն որոշում,
5. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք,
6. Քաջարան քաղաքի կապիտալ զարգացման 2013-2016 թթ ծրագիր:

## ԾՐԱԳՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի ռազմավարական նպատակը բնական էկոհամակարգերի պահպանությու-նը, բարելավումը և բնակչության էկոլոգիական անվտանգության ապահովումն է:

## ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

## Նպատակ 1. Քաղաքային լուսավորության համակարգի էներգաարդյունավետ արդիականացում

### Խնդիր 1 Բարձր ճնշումային նատրիումային լամպերի փոխարինում լուսադիոդային լամպերով

2016թ. Քաջարանի քաղաքային լուսավորության (Լեռնագործներ փողոց) համակարգի էներգաարդյունավետ արդիականացման ցուցադրական նախագիծ է իրականացվում ՄԱԶԾ կողմից իրականացվող և ՀՀ բնապահպանության նախարարության կողմից համակարգվող «Քա-ղաքային կանաչ լուսավորություն» ՄԱԶԾ-ԳԷՀ/00074869 ծրագրի շրջանակներում ՄԱԶԾ և Քաջարանի քաղաքապետարանի կողմից ստորագրված հուշագրի հիման վրա:

Քաջարանի շրջակա միջավայրի պահպանության 2017թ. Ծրագրի շրջանակներում նախատես-ված միջոցառման իրականացումը ավելի կմեծացնի նախագծի արդյունավետությունը՝ ավելի շոշափելի դարձնելով համայնքի բյուջեի ծախսերի կրճատումը, փողոցների լուսավորության մակարդակի բարձրացումն ու համապատասխանեցումը նորմերին, ջերմոցային գազերի արտա-նետումների կրճատումը:

**Համապատասխանությունը «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի պահանջներին.**

Համապատասխանում է Օրենքի 3-րդ հոդվածի ա) կետի ***«շրջակա միջավայրի տեղական և տարածաշրջանային աղտոտվածության դեմ պայքարը, որը ներառում է մթնո-լորտային օդի մաքրության պահպանության, ջրային ռեսուրսների (մակերևու-թային և ստորերկրյա) պահպանության, աղմուկի և վիբրացիայի դեմ պայքարի և ճառագայթահարման դեմ պաշտպանության հետ կապված աշխատանքները և գործողությունները (...) »*** պարբերությանը:

## Նպատակ 2. Բնապահպանական մշակույթի ձևավորում

### Խնդիր 1. Էկոլոգիական կրթության զարգացում և տեղեկատվություն

Համայնքում էկոլոգիական կրթության զարգացումը քաղաքապետարանի կողմից իրակա-նացվող էկոլոգիական քաղաքականության հիմնական բաղադրիչն է:

«Քաջարանի բնության և բնակչության առողջության պահպանություն» ծրագրի շրջանակնե-րում էկոլոգիական գիտելիքների տարածման և էկոկրթության զարգացման նպատակներով համայնքի հանրակրթական դպրոցների ուսումնական պլաններում ընդգրկվել է «Քաջարան. բնությունը և էկոլոգիան» դպրոցական առարկան (8-9 դասարանների համար): Կազմվել է համա-պատասխան դասագիրք, մեթոդական ուղեցույց ուսուցիչների համար և ուսումնական դիտակտիկ նյութեր:Առարկայի դասավանդումը, հետագայում նաև այլ դասարանների ընդգրկմամբ, բարձր մակարդակով կազմակերպելու, դասընթացն ավելի գործնական, հաճելի ու գրավիչ դարձնելու համար Ծրագրի շրջանակներում դպրոցներում մասնագիտացված էկոլոգիական դասարան-լաբորատորիաներ են ստեղծվել, համալրվել համապատասխան ուսումնական նյութերով ու

սարքավորումներով: Դասարան-լաբորատորիաների ուսումնական արդիական տեխնիկական միջոցներով հագեցված լինելը համակողմանի ու արդյունավետ է դարձնում աշակերտների էկոլոգիական կրթության ու դաստիարակության կազմակերպումը:

**Գործողություն 1. Քաջարանի դպրոցներում քաղաքապետարանի կողմից ստեղծված էկոլոգիայի լաբորատորիաների գործունեության ապահովում**

*- լաբորատոր նյութերի, պարագաների համալրում,*
*- ուսումնական դիտակտիկ նյութերի ձեռք բերում,*
*-դաշտային բանակումների և բնապահպանական ճամբարների կազմակերպում:*

**Գործողություն 2. Տեղեկատվական նյութերի հրատարակում**

***Հիմնավորում.*** «Քաջարան.բնությունը և էկոլոգիան» ուսումնական առարկայի դասավանդման ու դպրոցների էկոլոգիայի լաբորատորիաների բնթացիկ գործունեության ապահովումն իրականացնում է քաղաքապետարանը: Այս բնազավառում քաղաքապետարանի հանձն առած գործունեությունը լիովին համապատասխանում է «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին», «Կրթության մասին», «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքների, ՄԱԿ-ի «ԵՏՀ Կրթություն հանուն կայուն զարգացման» ռազմավարության սկզբունքներին ու դրույթներին:

***Արդյունք.*** Կապահովվի Ծրագրի շարունակականությունն ու անընդհատությունը:

**Համապատասխանությունը «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի պահանջներին.**

Հանապատասխանում է Օրենքի 3-րդ հոդվածի ա) կետի ***« շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ տեղեկատվության տարածման կամ իրազեկման, էկոլոգիական կրթության գծով աշխատանքները և գործողությունները, բնապահպանությանը վերաբերող վերապատրաստման դասընթացների կազմակերպումը և ինստիտուցիոնալ ամրապնդումը»*** և Օրենքի 3-րդ հոդվածի ա) կետի ***«համայնքահեն բնապահպանական հասարակական կազմակերպություններին սույն կետում նշված միջոցառումների կատարման համար աջակցության ցուցաբերումը»*** պարբերություններին:

## Նպատակ 3. Մթնոլորտային օդի պահպանություն

**Խնդիր 1 Մթնոլորտային օդի որակի դիտարկման ավտոմատ կայանի ստեղծում**

Քաղաքային պայմաններում շրջակա միջավայրի աղտոտման մեջ առավել վտանգավոր և ուշագրավ են մթնոլորտային արտանետումները, որի արդյունքում ձևավորվում են աղտոտված օդային զանգվածներ: Վերջինս իր հետ բերում է քաղաքային էկոհամակարգի մյուս բաղադրիչների աղտոտման:

Քաջարան քաղաքի մթնոլորտային օդի աղտոտող հիմնական աղբյուրը Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն է: Քաղաքային էկոհամակարգին վնաս պատճառող և բնակչությանն անհանգստացնող հիմնական աղտոտիչը արտադրական փոշին է:

Հաշվի առնելով, որ ՋՊՄԿ նախատեսում է մեծացնել հանքի շահագործման ծավալները, փոշու ծանրաբեռնվածությունը քաղաքի վրա ավելի կմեծանա:

Այս առումով նպատակահարմար է օդի որակի դիտարկման ավտոմատ կայանի ստեղծմանն ուղղված միջոցառումները սկսել մթնոլորտային օդում փոշու ստացիոնար ավտոմատ անալիզատորի ձեռք բերմամբ:

**Գործողություն. Մթնոլորտային օդում փոշու ստացիոնար ավտոմատ անալիզատորի ձեռք բերում**

Հանապատասխանում է Օրենքի 3-րդ հոդվածի ա) կետի «*շրջակա միջավայրի տեղական և տարածաշրջանային աղտոտվածության դեմ պայքարը, որը ներառում է մթնոլորտային օդի մաքրության պահպանության, ջրային ռեսուրսների (մակերևութային և ստորերկրյա) պահպանության, աղմուկի և վիբրացիայի դեմ պայքարի և ճառագայթահարման դեմ պաշտպանության հետ կապված աշխատանքները և գործողությունները (…)»* պարբերությանը:

## Նպատակ 4. Թափոնների կառավարման բարելավում

### Խնդիր 1. Կենցաղային աղբի կուտակման աղբարկղերի համար հարթակների կառուցում

Քաղաքում աղբահանությունն իրականացվում է մասնագիտացված աղբատար մեքենաներով: Հարթակների բացակայությունը մեքենաների համար լրացուցիչ դժվարություններ է ստեղծում տեղանքին մոտենալու և բարձման աշխատանքներն իրականացնելու համար: Հարթակների բացակայությունը նաև փողոցների երկրորդային աղտոտման պատճառ է հանդիսանում՝ վատթարացնելով դրանց սանիտարական վիճակը:

**Համապատասխանությունը «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի պահանջներին.**

Համապատասխանում է Օրենքի 3-րդ հոդվածի ա) կետի ***«-թափոնների օգտահանմանը, դրանց անվտանգ հեռացմանը, թափոնների հեռացման մասնագիտական պոլիգոնների ստեղծմանը…»*** պարբերությանը:

## Նպատակ 4. Համայնքային մանկապարտեզի բուժկետի տեխնիկական պայմանների ապահովում

### Խնդիր 1. Համայնքի մանկապարտեզի բուժկետի համար անհրաժեշտ գույքի և սարքերի ձեռք բերում

Նախագծի նպատակը համայնքային մանկապարտեզի բուժկետի տեխնիկական պայմանները ՀՀ Կառավարության 05.12.2002թ. № 1936-Ն «Պոլիկլինիկաների (խառը, մեծահասակների և մանկական), առանձին մասնագիտացված կաբինետների, ընտանեկան բժշկի գրասենյակների, գյուղական բժշկական ամբուլատորիաների, գյուղական առողջության կենտրոնների, բուժակ-մանկաբարձական կետերի, կանանց կոնսուլտացիաների գործունեության համար անհրաժեշտ տեխնիկական և մասնագիտական որակավորման

պահանջներն ու պայմանները հաստատելու մասին» որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխանեցնելն է:

Համայնքի մանկապարտեզի բուժկետում առկա միջոցները բավարար չեն քանակապես, հնացած են և չեն համապատասխանում արդիական բժշկական, բարոյական, տեխնիկական, էսթետիկական պահանջներին:

**Համապատասխանությունը «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի պահանջներին.**

Համապատասխանում է Օրենքի 3-րդ հոդվածի բ) կետի ***« - առողջապահության բնագավառում լիազորված պետական մարմնի հետ համաձայնեցված այլ համապատասխան միջոցառումներ…»*** պարբերությանը:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Ծրագրի իրականացումը թույլ կտա ապահովել իրականացված բնապահպանական ծրագրերի անընդհատությունը և շարունակականությունը, կբարձրացնի էկոլոգիական կրթության զարգացման համար ներդրված միջոցների արդյունավետությունը և կբարելավի քաղաքի էկոլոգիական պայմանները: Ծրագիրը կնպաստի նաև համայնքային և պետության կողմից տրամադրվող միջոցների, ՀՀ –ում գրանցված միջազգային, հումանիտար, ոչ կառավարական և այլ կազմակերպությունների հնարավորությունների առավել նպատակային և արդյունավետ օգտագործմանը՝ քաղաքի առջև ծառացած էկոլոգիական խնդիրների լուծման նպատակով:

Համայնքի ղեկավար՝ Վ.Գևորգյան

Հաստատում եմ

Քաղաքապետ Վ. Գևորգյան

# ՀԱՎԵԼՎԱԾ

Քաջարան քաղաքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2017 թվականի ծրագրի

*անդրական, հազար դրամ*

| | Ծրագրի ոլորտը և միջոցառումների անվանումները | Միջոցառումների հիմնական ցուցանիշներ | | | | | Ֆինանսավորման ծավալները | | | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Կատարման ժամկետ | Չափի միավոր | Միավորի արժեք | Քանակ | Ընդհանուր գումար | Վեց ամիս | Ինը ամիս | Տարի | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ | | | | | | 7818,8 | 1930,0 | 7518,8 | 7818,8 | |
| 1 | Քաղաքային լուսավորության համակարգի էներգաարդյունավետ արդիականացում | | | | | 3300,0 | 0,0 | 3300,0 | 3300,0 | Գնանշման համար հիմք են հանդիսացել լուսադիոդային լուսարձակների ներմուծմամբ և վաճառքով զբաղվող կազմակերպությունների առաջարկած գնացուցակները՝ տեղադրված պաշտոնական կայքերում: Մասնավորապես՝ eiektrika.am, energysaving.am: Առաջնորդվել ենք նաև 2016թ. իրականացված պիլոտային նախագծի արդյունքներով: |
| | Բարձր ճնշումային նատրիումային լամպերի փոխարինում լուսադիոդային լամպերով | 2-րդ եռ | հատ | 110,0 | 30 | 3300,0 | 0,0 | 3300,0 | 3300,0 | |
| 2 | Էկոլոգիական կրթություն և տեղեկատվություն | | | | | 1430,0 | 930,0 | 1130,0 | 1430,0 | Նախատեսված ծախսերի հաշվարկը ներկայացված է կից բացատրագրում |
| | Քաղաքի դպրոցների էկոլոգիայի լաբորատորիաների գործունեության ապահովում | 1-4րդ եռ. | լաբորատորիա | 550,0 | 2 | 1100,0 | 600,0 | 800,0 | 1100,0 | |
| | Տեղեկատվական նյութերի հրատարակում | 4 եռ. | տեղ. թերթիկ* օրինակ | 0,8 | 100 | 330,0 | 330,0 | 330,0 | 330,0 | |
| | | | գրքույկ* օրինակ | 2,5 | 100 | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | **Քաղաքի կանաչ տարածքների վերականգնում և ընդլայնում** | | | | | **1800,0** | **0,0** | **1800,0** | **1800,0** | Պուրակի բարեկարգման աշխատանքների արժեքի որոշման համար հիմք է հանդիսացել ՀՀ քաղաքաշինության նախարարի 03.04.2009թ. «ՀՀ տարածքում կառուցվող շենքերի, կառուցվածքների և շինարարական աշխատանքների տեսակների արժեքի խոշորացված ցուցանիշների ժողովածուն հաստատելու մասին:» հրամանը:<br><br>Աշխատանքները կիրականացվեն նախահաշվային փաստաթղթերի մշակումից հետո: |
| | Լեռնագործներ փողոցի պուրակի կապիտալ վերանորոգում և կանաչ պլանավորում | 3-րդ եռ. | մ² | 6,0 | 300,0 | 1800,0 | 0,0 | 1800,0 | 1800,0 | |
| 4 | **Կենցաղային թափոնների կառավարման բարելավում** | | | | | **1288,8** | **1000,0** | **1288,8** | **1288,8** | Նախատեսված ծախսերի հաշվարկը ներկայացված է կից բացատրագրում |
| | Կենցաղային աղբի կուտակման աղբարկղերի համար հարթակների կառուցում | 2-3 եռ. | հատ | 6 | 214,8 | 1288,8 | 1000,0 | 1288,8 | 1288,8 | |
| ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ | | | | | | **580,0** | **580,0** | **580,0** | **580,0** | Գնանշման համար հիմք են հանդիսացել բժշկական գույքի և սարքավորումների ներմուծմամբ և վաճառքով զբաղվող կազմակերպությունների առաջարկած գնացուցակները՝ տեղադրված պաշտոնական կայքերում և գնի հարցումները:<br>**http://unimed.am/, http://medtechnicaplus.am/**<br><br>Մեր հարցմանը գնառաջարկ ենք ստացել նաև <<Փինք ֆլամինգո>> ՍՊԸ – ից: |
| 5 | Համայնքային մանկապարտեզի բուժկետի տեխնիկական պայմանների ապահովում | | | | | **580,0** | **580,0** | **580,0** | **580,0** | |
| | *Ռոստի ապարատ* | 2-րդ եռ | հատ | 35,0 | 1 | 35,0 | 580,0 | 580,0 | 580,0 | |
| | *Մանկական տոնոմետր* | | | 7,0 | 2 | 14,0 | | | | |
| | *Բժշկական ջերմաչափ՝ էլեկտրական ձկվող ծայրով* | | | 8,0 | 5 | 40,0 | | | | |
| | *Հասակաչափ կշեռ* | | | 160,0 | 1 | 160,0 | | | | |
| | *Բժշկական ապակե պահարան* | | | 110,0 | 1 | 110,0 | | | | |
| | *Բժշկական թախտ* | | | 75,0 | 1 | 75,0 | | | | |
| | *Բժշկական աթոռ* | | | 32,0 | 3 | 96,0 | | | | |
| | *Սեղան* | | | 50,0 | 1 | 50,0 | | | | |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** այդ թվում | | | | | | **8398,8** | **2510,0** | **8098,8** | **8398,8** | |
| *Կապիտալ ծախսեր* | | | | | | *6969,8* | *1580,0* | *6968,8* | *6968,8* | |
| *Վարչական ծախսեր* | | | | | | *1430,0* | *930,0* | *1130,0* | *1430,0* | |

# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Քաջարանի քաղաքային համայնքի 2017թ. Շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման ծրագրով նախատեսված ծախսերի տնտեսագիտական դասակարգման մասին

1. Քաղաքային լուսավորության համակարգի էներգաարդյունավետ արդիականացում- 3300,0 հազ դրամ
**Կապիտալ ծախս է**
*ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 09.01.2007թ թիվ 5-Ն «ՀՀ բյուջետային ու հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» հրաման,հավելված 17, խումբ 512900 (Այլ մեքենաներ և սարքավորումներ):*

2. Էկոլոգիական կրթության զարգացում, տեղեկատվություն - 1430,0 հազ. դրամ
**Վարչական ծախս է**
*ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 09.01.2007թ թիվ 5-Ն «ՀՀ բյուջետային ու հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» հրաման,հավելված 16,խումբ 421000 (Շարունակական ծախսեր),423000 (Պայմանագրային ծառայություններ),426000 (Նյութեր):*

3. Քաղաքի կանաչ տարածքների կապիտալ վերականգնում և ընդլայնում - 1800,0 հազ. դրամ
**Կապիտալ ծախս է**
*ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 09.01.2007թ թիվ 5-Ն «ՀՀ բյուջետային ու հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» հրաման,հավելված 17, սինթետիկ հաշիվ 511300 (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում):*

4. Կենցաղային աղբի կուտակման աղբարկղերի համար հարթակների կառուցում – 1288,8 հազ դրամ
**Կապիտալ ծախս է**
*ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 09.01.2007թ թիվ 5-Ն «ՀՀ բյուջետային ու հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» հրաման,հավելված 17, սինթետիկ հաշիվ 511200 (Շենքերի և շինությունների կառուցում):*

5. Համայնքային մանկապարտեզի բուժկետի տեխնիկական պայմանների ապահովում – 563,0 հազ դրամ
**Կապիտալ ծախս է**
*ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 09.01.2007թ թիվ 5-Ն «ՀՀ բյուջետային ու հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» հրաման,հավելված 17, սինթետիկ հաշիվ 512200 (Վարչական սարքավորումներ):*

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Համայնքի ղեկավար Մ. Փարամազյան
20.09.17թ.

# ՀԱՎԵԼՎԱԾ

**Քաջարան քաղաքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2017 թվականի ծրագրի՝ Քաջարանի քաղաքային համայնքի ավագանու 06 սեպտեմբերի 2017թ. թիվ 36-Ա որոշմամբ հաստատված փոփոխություններով**

| | Ծրագրի ոլորտը և միջոցառումների անվանումները | Միջոցառումների հիմնական ցուցանիշներ | | | | | Ֆինանսավորման ծավալները | | | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Կատար ման ժամկետ | Չափի միավոր | Միավորի արժեքը | Քանակ | Ընդհանուր գումար | Վեց ամիս | Ինը ամիս | Տարի | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ | | | | | | 7820,0 | 600,0 | 6116,0 | 7820,0 | |
| 1 | Քաղաքային լուսավորության համակարգի էներգաարդյունավետ արդիականացում | | | | | 3300,0 | 0,0 | 3300,0 | 3300,0 | Գնանշման համար հիմք են հանդիսացել լուսադիոդային լուսարձակների ներմուծմամբ և վաճառքով զբաղվող կազմակերպությունների առաջարկած գնացուցակները՝ տեղադրված պաշտոնական կայքերում: Մասնավորապես՝ eiektrika.am, energysaving.am: Առաջնորդվել ենք նաև 2016թ. իրականացված պիլոտային նախագծի արդյունքներով: |
| | Բարձր ճնշումային նատրիումային լամպերի փոխարինում լուսադիոդային լամպերով | 2-րդ եռ | հատ | 110,0 | 30 | 3300,0 | 0,0 | 3300,0 | 3300,0 | |
| 2 | Էկոլոգիական կրթություն և տեղեկատվություն | | | | | 1430,0 | 600,0 | 800,0 | 1430,0 | Նախատեսված ծախսերի հաշվարկը ներկայացված է կից բացատրագրում |
| | Քաղաքի դպրոցների էկոլոգիայի լաբորատորիաների գործունեության ապահովում | 1-4րդ եռ. | լաբորատորիա | 550,0 | 2 | 1100,0 | 600,0 | 800,0 | 1100,0 | |
| | Տեղեկատվական նյութերի հրատարակում | 4 եռ. | տեղ. թերթիկ* օրինակ | 0,8 | 100 | 330,0 | 0,0 | 0,0 | 330,0 | |
| | | | գրքույկ* օրինակ | 2,5 | 100 | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | **Մթնոլորտային օդի պահպանություն**<br>*Մթնոլորտային օդի որակի դիտարկման ավտոմատ կայանի ստեղծում* | | | | | **2016,0** | **0,0** | **2016,0** | **2016,0** | Գնանշման համար հիմք են հանդիսացել չափիչ սարքավորումների արտադրությամբ և վաճառքով զբաղվող կազմակերպությունների առաջարկած գնացուցակները` տեղադրված պաշտոնական կայքերում:<br>[http://www.analytcom.ru](http://www.analytcom.ru),<br>[http://imc-systems.ru](http://imc-systems.ru)<br>turnkey-instruments.com<br>[http://www.derenda.de](http://www.derenda.de) |
| | Մթնոլորտային օդում փոշու ստացիոնար ավտոմատ անալիզատորի ձեռք բերում | 3-րդ եռ. | հատ | 2016,0 | 1 | 2016,0 | 0,0 | 2016,0 | 2016,0 | |
| 4 | **Կենցաղային թափոնների կառավարման բարելավում** | | | | | **1047,0** | **--** | **--** | **1074,0** | Նախատեսվոծ ծախսերի հաշվարկը ներկայացված է կից բացատրագրում |
| | Պուրակների համար աղբամանների ձեռք բերում | 4-րդ եռ. | հատ | 87,25 | 12 | 1047,0 | -- | -- | 1074,8 | |
| ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ | | | | | | **580,0** | **580,0** | **580,0** | **580,0** | Գնանշման համար հիմք են հանդիսացել բժշկական գույքի և սարքավորումների ներմուծմամբ և վաճառքով զբաղվող կազմակերպությունների առաջարկած գնացուցակները` տեղադրված պաշտոնական կայքերում և գնի հարցումները:<br>**[http://unimed.am/](http://unimed.am/), [http://medtechnicaplus.am/](http://medtechnicaplus.am/)**<br><br>Մեր հարցմանը գնառաջարկ ենք ստացել նաև <<Փինք ֆլամինգո>> ՍՊԸ – ից: |
| 5 | **Համայնքային մանկապարտեզի բուժկետի տեխնիկական պայմանների ապահովում** | | | | | **580,0** | **580,0** | **580,0** | **580,0** | |
| | *Ռոտի ապարատ* | 2-րդ եռ | հատ | 35,0 | 1 | 35,0 | 580,0 | 580,0 | 580,0 | |
| | *Մանկական տոնոմետր* | | | 7,0 | 2 | 14,0 | | | | |
| | *Բժշկական ջերմաչափ` էլեկտրական ճկվող ծայրով* | | | 8,0 | 5 | 40,0 | | | | |
| | *Հասակաչափ կշեռ* | | | 160,0 | 1 | 160,0 | | | | |
| | *Բժշկական ապակե պահարան* | | | 110,0 | 1 | 110,0 | | | | |
| | *Բժշկական թախտ* | | | 75,0 | 1 | 75,0 | | | | |
| | *Բժշկական պթոռ* | | | 32,0 | 3 | 96,0 | | | | |
| | *Սեղան* | | | 50,0 | 1 | 50,0 | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ<br>**այդ թվում** | | | | | | 8400,0 | 1180,0 | 6696,0 | 8400,0 | |
| *Կապիտալ ծախսեր* | | | | | | *6970,0* | *1080,0* | *6970,0* | *6970,0* | |
| *Վարչական ծախսեր* | | | | | | *1430,0* | *600,0* | *800,0* | *1430,0* | |

**Համաձայնեցված է**

ՀՀ բնապահպանության նախարար

Ա. Գրիգորյան

«15» դեկտեմբերի 2016թ.

**Հավելված**

Քաջարան համայնքի 2017թ.

բնապահպանական ծրագրի

# Քաջարան համայնքի 2017 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները